

դութեան, քառակուսի, մօտ մէկ ու կէս մետր մեծաթեան, որի մի ծայրին կայ արծաթեայ ճարմանդ-շանցեալը ։ Եռոնկիւնաձև ծալում են, ճարմանցաւար մասը ձգում զբիսին, ապա նոյն ծայրն անցկացնում թիվ տակով և միւս կողմից նոյն շալի մէջ ճարման դում Յետոյ շալի միւս ծայրը վերցնում են, իրար վերայ երկու անգամ եռոնկիւնաձև ծալում և վերի ծայրերը ձգում ուսերի վերայ, ապա հրամանցի շանցալը, որ զամզի վրայ էր խրած, հանում են և ամրացնում այս շալի վրայ, ինչպէս և սաննաւդ պաշիները ։ Եսին այնպէս են ձգում, որ պառաւներինը ամրողի ճըկտանոցը ծածկում է, իսկ երիտասարդներինը՝ մնում է միայն գոտաթի վրայ և կնջիկը ամրողովին երևում է։ Եալի վրայից վզի վերայով ձգում են շանցալը։ Սա արծաթեայ երեք խուփ է, իւրաքանչիւրը 2—4 ս. մետրթեան, որոնք միացած են միմեանց հետ 4—5 արծաթեայ շղթաներով, որոնցից վերջինի, ինչպէս և այս խօների վրայ, քաշ են գտիս 2 տանա. շղթաներով փոքրիկ արծաթեայ, մնամէջ զննակիներ՝ պիտի ։ Միջին խուփի վերի մասուց մի երկոտակ արծաթեայ շղթայ է ձգում, մօտ 11 ս. երկարութեան, որի ծայրին եռանկիւնաձև մի ճարմանդ՝ զլիսի շանցալ՝ է ամրացրած։ Միւս երկու խուփերից մինի վրայ ևս մի ուրիշ, եռանկիւնաձև արծաթեայ ճարմանդ՝ շանցեալ՝ է անմիջապէս միացած, իսկ երրորդի վրայ երկու արծաթեայ կարթեր են ամրացրուած։ Կարթերը ձգում են ըրեսանոցի ներքին զննակիկի վրայից, այնպէս որ զննակիկը մնում է կարթերի բացուածքի մէջ, միւս ճարմանդը վզի վերայով անցկացնելով միւս քունքերի մօտ ճարմանդում են, իսկ զլիսի շանցալը ամրացնում զանզի վրայ, շանցալն այսպիսի երկու հատ է լինում, որ ամրացնում են զլիսի աջ և ձախ կողմերում։

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

### ԱՍՈՒՄՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՄԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասակ.—Գողթան գաւառն այն սակաւաթիւ գաւառներից է եղել, ուր փոքրահասակների ամուսնութիւնը շատ հազիւ է տեղի ունեցել<sup>1)</sup>։ Երիտասարդը 20 տարեկանից,

<sup>1)</sup> Հին ճարմանիքի վերաբերութեամբ ևս նիւթեր եմ հաւաքել Յղնայում առաւելապէս պ. Դասպար Գարբիէլեանից, և Ազուլի-

աղջիկը՝ 15-ից յետոյ միայն ենթարկուել են ամուսնական լժին, իսկ այժմ աւելի ուշ:

Ամուսնացողների հասակի համեմատութիւնը. — Ամուսնացող դպրի հասակի տարբերութիւնը շատ մեծ չէր լինում. 5—10, շատ հազիւ 15 տարի Բանան տարեկանից բարձր աղջիկը, որ պառաւած էր համարում՝ միայն այրիացած մարդու հետ կարող էր ամուսնալու Համարեարորոգինին չէր պատահում, որ կինը ամուսնուց տարիքով աւելի լինէր. Այժմ համեմատաբար շատ աւելի բարձր հասակում են ամուսնանում:

Ամուսնացողներն ըստ ազգութեան. — Հնումը հազիւ էր պատահում, որ զակը ուրիշ գաւառացի հայի և մանաւանդ օտարազգի հետ ամուսնանար. Ահազին հեռաւորութիւնից վերադառնում էր իւր հայրենի զիւղը յատկապէս պատկուելու նպատակով, միքանի ամսից յետոյ թողնում էր կնոջը և նորից պանդխուում 1—3—5—7 տարի մնալով օտար երկրներում. Շատ շատերի համար ծննդավայրի հետ կապող կապը միայն կինն ու երեխաներն էին լինում. Բայց այժմ շատ յաճախ պատահում է, որ զոկը ոչ միայն ուրիշ գաւառացի հայի, այլև օտարազգու հետ ամուսնանում է, շատ անգամ ընդ միշտ կարուելով իւր ծննդավայրից. Եւ այս երեսոյթն առաւելապէս նկատում է ուսում, մանաւանդ բարձրագոյն ուսում, առած մարդկանց մէջ. Իգական սեռից թէպէտ և շատերը հաճութեամբ հարս են դնում Մեղրի, Օրդուքադ, Նախիջևան և այլ տեղերի հայերի տները, բայց զեռ չէ պատահած մինը՝ որ ամուսնացած լինէր մի օտարազգու հետ:

Ամուսնացողների համաժայնութիւնը. — Հնումը զոկերը ևս ամուսնական խնդրում առանձին նշանակութիւն չէին տալիս փեսացուի և մանաւանդ հարսնացուի կամքին ու համաձայնութեան. Շատ անգամ օտարութեան մէջ եղող

ուսում՝ ոդ. Դրիգոր Արիեանից, Բացի որանից ի նկատի եմ ունեցել Տէր Յակոր հօր տեարը՝ Ներքին Ազուլիսի և ոդ. Հախնազարեանինը՝ Վերին Ազուլիսի վերաբերութեամբ:

որդին համակ էր ստանում ծնողներից, որ իրեն նշանել են և պատուիրում են, որ մի քանի ամսից վերագառնայ պակուելու Աղջկայ համար չափաղանց մեծ ամօթ էր համարւում, որ հետաքրքրուէր ամունու ընտրութեամբ. այդ մասին խօսք լինելիք՝ նա անշուշտ պիտի հեռանար և լուէր Այժմ այդ ժամանուից ժամանակիներն անցել են, և ոչ միայն ազան այլ և աղջիկը իրենց ձայնը լսելի են դարձնում:

Փառակայում աւանդաբար պատմում են, թէ էին ժամանակներում իրենք աղջիկներն էին ընտրութիւն անում և ոչ թէ տղաները եւ ում հետ որ կամննում էին ամունանալ, զնում էին նրա տան հերթիկից մկաւում: Ռւշագրաւ է նաև այն, որ Աղէքանդրապօլում երբ մի աղջկայ համար կամննում են առել թէ ցանկանում է ամունանալ՝ հեղնում են, թէ մըռնիստու է կանչում:

Օրօրոցախազի սովորութիւնն այս գաւառում ևս տեղի է ունեցել: Ծնողները միմեանց հետ բարեկամանալու և մանաւանդ վրէժինքրութիւնը կամ տոհմային թշնամութիւնը վերացներու նպատակով խոստանում էին իրենց երեխաներին միմեանց հետ ամունացնել, երբ 10—11 տարեկան դառնան: Նոյնն անում էին նաև այն ծնողները, որոնց որդիները չէին ապրում: յուսալով, որ նշանածի արելը կարող էր պահպանել այսպիսի որդուն, նրան շուտով նշանում էին: Այժմ այս սովորութիւնը բոլորովին վերացել է:

Աղջիկ փախցնելու սովորութիւնը շաա հազւագէոլ է եղել, իսկ այժմ բոլորովին վերացել է:

Լեվիթատ. — Իբր այս վաղեմի սովորութեան մեացորդ նկատելի է այն՝ որ վախճանուած փեսացուի փոխարէն՝ նրա եղբայրն է ամունանուած որա նշանածի հետ, ինչպէս այդ պատահել է Փառակայում, և կամ վախճանուած հարանացուի փոխարէն՝ նրա քոյրն է հարանանուած որա նշանածին, ինչպէս եղել է Յդիայում:

Աղջիկ ուզել. — Հարսնացուի ընտրութեան միջոցին

մեծ ուշագրաւթիւն բարձնում են նրա մօր բնաւորութեան վրայ, առաջնորդուելով այն սկզբունքով, թէ ութէ մայրը ծառը բարձրանայ՝ աղջիկը ճիւղերի վրայ ման կը գայց։ Ընարութիւնից յետոյ երիտասարդի մօրեղբայրը կամ բեռայրը իրը «խնամախօս» գնում է աղջկայ ծնողների մօտ և ասում. «Աստծոյ հրամանաւը նո՞ցըմ ըք ձիր ախչիկը միր տղին հետի, եթէ ցդնեցի է, կամ՝ նիդա՞մ ըք ձիր ախչիկը միր տղան հա՞տի, եթէ ազուեցի է,

Եթէ կամենում են մերժել՝ ասում են. Ակնիս վա՞րա՞ն ըս ակալ, տղադ ալ ա օքուտ, տօնդ ալ ա օքուտ, ամամիկ ախչիկ չօննիք ձիր տղան տալու։

Իսկ եթէ մտադիր են տալու, մի երկու օր ձգձգում են, իրը. թէ խորհրդակցելու են և ապա խօսք տալիս: Խոկոյն օդի են մատուցանում, օր հետեւեալ կերպով բարեմախուելով խոմում են. Աստուած շնորհաւոր արի, Աստուած պարի վայելում առ։

Բայզան. — Աղջկայ ծնողներից համաձայնութեան խօսքն առնելուց յետոյ եթէ փեսացուն բացակայ է լինում գիւղից, նրա ծնողները կամ խընթամախօսները խնձորի մէջ խրած մի մատանի տանում են աղջկայ տունը, հիւրասիրուում և մատանին հրապարակաւ գնում աղջկայ մատը: Եթէ երիտասարդը ներկայ է լինում՝ բարդան աեղի չի ունենում, այլ ուղակի՝ նշանադրութիւն։

ՆՈՉԾՆՈՂԲՐՅ. — Միքանի օրից յետոյ մի երեկոյ փեսացուի մայրը մրգեր է ածում մի խոնչի մէջ, նշանի մատանին մի մետաքսեայ թաշլինակի ծայրին կապած գնում վերան և փեսացուի ու մօտիկ բարեկամ տղամարդկանց ու կանանց հետ դափ ածելով ու երգելով գնում հարսնացուի տունը։ Ներս մտնելով բարիլոյս էին ասում, չնայելով որ երեկոյ էր, որպէսզի չարը խափուի թէ լոյս է և չմերձենայ իրենց։ Փեսացուն քաւորի հետ միասին կանգնում էր զբախ զռաջ առաջ, մինչեւ որ զոքանչը, քենին և այլ խնամիներ չէին զալիս բարելում նրան ու ներս հրաւիրում, տալով նրան զանազան քաղցրեղէններ. ոմանք

նոյնիսկ մի կտոր շաքար գնում էին նրա բերանը, իսկ նա հանում էր և տալիս խաչեղբօրը՝ որ պահիս Երբ մօտենում էր դահլիճի դռանը՝ ներսից նրա բարեկամները ծիծաղելով հարցնում էին հարսնացուի հօրը, թէ՝ ինչ է ընծայելու փեսացուին, որ ներս մտնի, նա էլ կատակով խոստանում էր մի այզի, մի պարաէզ ընծայել, Փեսացուն մտնում էր ներս, համբուրում աներոջ ձեռքը, ուս էլ նրա ճակատը և առա խելք կանգնում քաւորի մօտ։ Ամօթ էր համարւում նստել, խօսել և կամ՝ ընթրիքի ժամանակ հաց ուտելը Մի քիչ յետոյ հարմնացուն մի կնոջ առաջնորդութեամբ զալիս էր և կանգնում փեսացուի դէմը. քահանան, որ նոյնպէս հրաւիրուած էր լինում, օրնում էր մատանին և տալիս փեսացուին, որ անց էր կացնում հարմնացուի աջ ձեռի միջամատը։ Ապա հարմնացուն հեռանում էր, իսկ միւսները նստում էին ընթրելու Հիւրերը ցրտելիս փեսացուին թոյց չէին տալիս գնալու, նորից սփառց էին ձգում և պլատորապէս կանայք սկսում էին հիւրասիրել նրան։ Զոքանչը և որա հետեղութեամբ միւս կանայք մի-մի բաժակ գինի էին մատուցանում փեսացուին, որ խմելուց յետոյ մի դրան (30 կ.) կամ մի փանարանդ (15 կ.) էր ձգում բաժակի մէջ և յետ տալիս Այս բաժակը կոչում էր՝ փսակթու-փեսայի թառ։

Այսպէս կատարւում էր ներքին Ազուլիսում և Ցղնայում, մինչդեռ Վերին Ազուլիսում նշանագրութիւնը երկու հանդիսավոր էր կատարւում. «Նշան կապնիլը և փստկանը» ոնչանը տարւում էր փեսացուի տանից տաւջ փեսայի կամ մի ուրիշ մօտիկ բարեկամի առաջնորդութեամբ, միքանի ազգականների հետ. «Նշանը» մի մեծ մատուցարանի մէջ ածած չոր և թաց մրգեր էր, մէջտեղ մի փոքրիկ զրլուխ շաքար դրած, կողքին մի գեղեցիկ, փոքրիկ, յաճախ արծաթեայ, տուփի մէջ 10—20 ուկիներ և մի մատանի դրած, վերան էլ մի մետաքսէ թաշկինակ ձգած, ու ամբողջը ծաղկի վնջերով դարդարուած։ Շատ անգամ չորացած մեխակներ ցցելով մի մեծ խնձորի մէջ զրում էին

հարսնացուի անունը: Շաքարի գլուխը և մրգերից շատերը լամփարզած էին լինում—ոսկեփոշով ոսկեգօծած: Հարսնացուի տանն էլ հրաւիրւում էին նրա բարեկամ տղամարդիկ և կանայք ժնշանը բաց անելու, մէկ մէկ վերցնում էին ուղարկուած իրերը, նայում և չնորհաւորում: Ապա ընթրում էին և ցրւում Հետեհեալ օրը նոյն մատուցաբանի մէջ լցնում էին նոյնպիսի չոր և թաց մրգեր, զարգարում ծաղկի փնջերով, մի խնձորի վրայ մեխակով զրում փեսացուի անունը և ուղարկում փեսացուին: Այս դարձի նուէրի մէջ զրուած էր լինում նաև մի մետաքսէ թաշկինակ, իրը սիալաթթ ժնշան բերող փեսային:

Միքանի օրից յետոյ հարսնացուի ծնողները հրաւիրում էին փեսային նրա ծնողների և բարեկամների հետ իրենց մօտ, ուր ժողովւում էին նաև իրենց բարեկամները: Այս հրաւերը կոչւում էր փսականչ:—Փեսացուն մի ոսկի մատանի, իսկ իւր բարեկամնը մի մի զարդ էին ահանում հարսնացուի համար: Երեկոյեան փեսացուն տեսնեռում էր հարսնացուի հետ և ամենից ուշ վերապահնում տուն:

Այժմ ժնշան տանելլա վերացած է, կատարում են միայն չփեսականչը, երբ քահանան օրնուում է փեսացուի բերած մատանին և դնում մատանեմատը: Փեսացուի ծնողները այս հանդիսին—փսականչին—չեն մասնակցում:

Շալակ: —Նշանապրութիւնից յետոյ փեսացուն շատ հազիւ էր այցելում աներանց տուն, ամաչում էր նոյն խոկ աներոջ հետ խօսել: Նրա նշանածն էլ նրանից էր փախչում, թաք կենում, ինչպէս Ա. Կ. որ փախել մտել էր թորոնը և խուփը վրայից ծածկել: Մինչդեռ նշանուածները այսպէս հեռու էին մտում միմեանցից, ծնողները միմեանց հետ շարունակ տեսնեռում էին, առնչն նշանաւոր տօն օր միմեանց նուէրներ ուղարկում: Այս նուէրները շալակ էին կոչւում և բաղկանում էին թաց ու չոր մրգերից ու մի որևէ զարդից կամ հագուատից: Շալակը մեծ մասամբ ուղարկուում էր փեսացուի անից: Փեսացուի քոյրն անշուշտ դնում էր շալակ տանողի հետ և հիւրասիրւում: Մննդեան

և գառեկի երեկոները փեսացուի քոյրը կամ եղրօր կինը և կամ մի այլ մօտիկ ազգականունի շարակ տանելով հարսնացուին՝ իւր հետ բերում էր եկեղեցի, ուր փեսացուի ազգականները համբուրում էին նրան և քաղցրեղէն ու մի մի մատանի, գարդ, ուկի կամ արծաթ դրամ նույիրում նրան. Այս նույիրները կոչւում էին իրիսանեսուկ. Այս սովորութիւնը ևս այժմ վերացել է:

Հարսնքախարջ.—Հարսանիքից մի քանի շարաթ առաջ փեսացուի մօրեղբայրը կամ քեսայրը և կամ հօրեղբայրը զնում էր ինամունց տուն, ուր ճաշով հիւրասիրուելուց յետ սակարկութեան էր մանում հարսնացուի հօր հետ և վերջի վերջոյ որոշում, որ փեսացուի հայրը տայ նրան իրը հարմաքախարջ 2 փութ միտ կամ մի ոչխար, մի փութ բրինձ, 10 ֆունա իւղ, 5 փութ հաց, 1—2 զլուխ շաքար և 4—5 բուրյիւնոց մետաքսէ թափառ (արխալուղի կամ շապկի կոր) հարսնացուի մօրը՝ իրը ծծազին և մի չուխայ՝ հօրը:

Երբեմն այս բոլորը գնահատում էին և դրամով վը-ճարում:

Այժմ այս սովորութիւնը վերանալով՝ ոչ թէ փեսացուի հայրն է վճարում, այլ հարսնացուի հայրը՝ հարիւրից մինչև միքանի հազար բուրյի և կամ մի որեւէ կալուածք, իրը օժիտ:

Եղիածեւանդ.—Հարսանիքից մի շարաթ առաջ մօտիկ ազգականունիները հրաւիրուում են փեսացուի տունը և մինչդեռ որանք այստեղ հիւրասիրուում են, երկու կին մի կատր շաքարի վրայ կանաչ կարմիր թել են փաթաթում և մի իրիստեսուկ (մի զարդ կամ դրամ) առած գնում ինսամոնց տունը, իրիստեսնուկը և շաքարը տալիս հարսնացուին և կանաչ կարմիր թելով չափն առնում, որ շապիկ կարեն. Ապա վերադառնում են փեսացուի տունը և սկսում են ձեել, Սակայն նախ նույիր են պահանջում, պատճառաբանելով թէ միքատը չի կարում. Նոյն օրը փեսացուի համար ևս շորեր են կարում:

Տօշտուղը. — Հնումը հարսանիքները մեծ մտառմբ ձը-  
մնան էր լինում, երբ մարդիկ համեմատաբար ազատ էին,  
իսկ այժմ՝ ամառը, որովհետեւ ձմեռը պանդխառում են ուրիշ  
քաղաքներ աշխատելու և այս ժամանակ վերադառնում են  
հայրենի գիւղը իրը ամառանոց:

Հարսանիքի պատրաստութիւնը միշտ ակաւում է չո-  
րեցարթի օրը: Թէ աղայի և թէ աղջկայ տանը հաւաքում  
են մօտիկ ազգականուհիները հարսանեկան հացի ալիւրը  
մաղելու: Երեկոյեան գէմ հացթուիսը վերցնում է շամփուրն  
ու հացառը, ալիւր մաղողը՝ մաղը, խոնարարուհին՝ շերեփը,  
և երաժշտութեան ներդաշնակութեամբ պարում, իւրաքան-  
չիւրը ձևացնելով իւր անելիքը, — ալիւր մաղել, հաց թխել,  
կերակուր եփել և այնու Տանտիկինը և ազգականուհիները  
արանց նուէրներ էին տալիս: Բաւական երկար պարելուց  
յիւրայ ազգականուհիները ընթրում էին և ցրւում, իսկ բան  
անող կանայք ալիւրը մաղում պատրաստում: Հինգչարթի  
առաւոտեան շատ վաղ սկսում էին թխել ոչ միայն հաց,  
այլ և գաթայ (եղանաց): Ապա վեսացուի տանից մի սկու-  
տեղի վրայ կենա թուով հաց, գաթայ, կոտապ<sup>1)</sup>, մի կուժ  
դինի դրած՝ նազարա-դուռնի առաջնորդութեամբ տանում  
էին հարմացուի տունը, որտեղից նոյնակէս միենոյն բա-  
ներից, միայն զոյտ թուով, բերում էին վեսացուի տունը:

Եզնը միըթելլ. — Ռւրաթ առաւոտեան նազարա-գուռ-  
նան ածում էր թագաւորի տան առաջը: Միքանի երիտա-  
սարդներ մի եզր բռնած կանգնում էին թագուռի հան-  
գէպ, իսկ աղջիկներ ու նորանարմաներ եռանդով պարում  
էին: Ի վերջոյ երիտասարդները վայր էին զլորում եզնը  
և մի նուէր առնելով թագաւորից՝ մորթում: Վերջինս իւր  
զրշահարը խաչաձև քսում էր արեան մէջ, փակում և զըր-  
պանը գնում, զգուշանալով, որ առագաստի զիշերից վաղ  
բաց չանի, որպէս զի չկապ շընկնիք — առնականութիւնը  
կորցնի:

<sup>1)</sup> Աղինձ, (կրօպիա), սոխ, սամիթ և այլ կանաչեղէն գնելով  
խմորի մէջ, բարակ և երկար ձև են տալիս և եփում:

Սրանից յետոյ թագուորի անեցիներից միքանիսը նա-  
դարա-զուռնի առաջնորդութեամբ զնում են մի մօտիկ  
ազգականի հրաւիրում սմակար-բաշիք լինելու, ու մի զա-  
ւազանի ծայրին մի թաշկինակի կապում տալիս ձեռք։ Սա  
էլ նոյն նազարա-զուռնայով շրջում է և հրաւիրում երի-  
տասարդներին՝ իրք մակարներ—թագուորի թիկնապահներ։  
Միևնոյն միջնորդին տասմէը մի թաշկինակի մէջ (ձմեռը՝  
չորացած, ամառը՝ թարմ) ժաղիկներ ածած շրջում է տնից  
տուն և մի մի փնջիկ տալով՝ հրաւիրում էր հարսանիքի, իւր  
այդ ժառայութեան համար մի մի հաց նուէր ստանալով։  
Այժմ հրաւիրազրեր են ուղարկում։

Երբ մակար-բաշին կազմակերպում է մակարների  
խումբը, նազարա-զուռնի առաջնորդութեամբ զնում է  
քաւորի տունը՝ նրան հրաւիրելու։

Քաւորը գոկերի մէջ ևս տոհմական է լինում և շատ  
հազիւ գէպքերում փոխում է։ Սանամայրը նրանից սաս-  
տիկ պատկառում է, անխօս էր մնում։

Քաւորենց տանը մի մեծ խոնչա են պատրաստած  
մինում։—մի մեծ սկսուաեղի վրայ ածած են լինում մրգեր,  
վերան գաթաներ, մի եփած հաւ, մի զազ կարմիր դա-  
նաւուզ, և մի կարմիր աղբուխ կամ մի արխալուզացու-  
զրած, կարմիր զանաւուզը նրա համար էր լինում, որ  
թագուորը պսակ գնալիս՝ իրենց տնից վերցրած կանանչ  
կտորի հետ խաչաձև կապէ իւր կրծքին։

Բացի այս խոնչից, պատրաստած են լինում նաև մի  
ռուսի ճիւղնը։—Մի ուռփ ճիւղի վրայ շարում են չամիչ,  
արմաւ, բակլի, սիսեռի, ընկոյզի, զանազան կորիգների  
շարաններ (մաղաշար)։

Քաւորի տանը փոքր ինչ ուրախութիւն անելուց յե-  
տոյ մակարները՝ խոնչան և ուռփ ճիւղը երկու մարդու  
ձեռք տուած՝ նազարա-զուռնի առաջնորդութեամբ գալիս  
են թագուորի տունը, որտեղից սանամայրը թագուորա-  
քուրերի և միքանի տնեցիների հետ հարսնացուին հինա է  
տանում։

Խընըտըրիք. — Մի մեծ սկուտեղի՝ խոնչի՝ մէջ ածում էին մրգեր, վերան զնում հարսնացուի մօր՝ ծծաղինը — արխալուդի կամ շապիկի կտոր — հօր չուփան, մի պլուխ շաքար՝ ոսկեզօծած և զագաթին մի մետաքսէ թաշկինակ կապած, մի ափսէով հինա՝ մէջտեղը մի նուռ՝ վերան մի վառուծ մոռ, մի կուժ զինի, օղի, ներկած ձուեր, զաթաներ և այլն. Չորս մեղքամոմ էլ վառում էին խոնչի շուրջը:

Մի խոյի մէջբին էլ հինայով խաչածե նշխեր էին առում, եղջիւրներին երկու մոմ վառում: Ապաս սանամայրը միքանի մարդկանց հետ այս խոնչան և խոյը առած թոյպաշու առաջնորդութեամբ զնում էր հարսնացուի տունը: Այսաեղ, ընթրիքից յետոյ սանամայրը հինայի ափսէն ձեռն առած, կամ զլիխին զրած, պարում էր, հրաւիրեաները զրամներ էին ձգում հինի վրայ. Նրան հետեւում էին միքանի աղջիկներ ու հարսեր: Հինան այսպէս պար ածելուց յետոյ սանամայրը վերցնում էր իրեն նուիրած զրամները և հինան շաղախում, զնում նախ հարսնացուի ձեռներին ու ոտներին և ապա ներկայ եղող բոլոր աղջիկների ու հարսների ձեռներին:

Նոյն գիշերը թագուորը և սրա մօտ եղած աղջիկներն ու հարսներն էլ հինա էին զնում իրենց ձեռներին: Այս սովորութիւնը այժմ բոլորովին վերացել է,

Սափիցը ծէսը. Հետեւեալ օրը, շաբաթ, առաւտեան, մակարները հաւաքում էին թագուորի տանը, որոնց հրաւիրելու համար զնում էր թոյպաշին նազարա-զուռնի առաջնորդութեամբ: Ամէն մի հրաւիրեալ մի թաշկինակ էր կապում նազարի վերայից, իր նուէր: Հրաւիրում էր սափիցը և նախ մակարների, ապա քաւորի միրուքն ու գրլուխը սափիրում: Բոլորից յետոյ սափիրում էր թագուորի միրուքը, և գագաթին խաչածե մի բացուածք անում: յետոյ հրաւիրում ներկայ եղողներին, որ համբուրեն թագուորի գագաթի այդ մասը: Նախ քաւորը և ապա մակարները համբուրում էին և զրամ ձգում թագուորի մօտ զրած ափսէի մէջ, ի վերջոյ սափիրիչը վերցնում էր այդ

դրամները և յետոյ սափրում թագուորի զլուխը՝ ու կատարին մի վնչիկ թողնում, որ քանգիւլը էր կոչւում։ Այս սովորութիւնը ևս այժմ վերացած է։ Սափրուելուց յետոյ զնում էին քաղցրի խոնչա—մատուցանում էին մեղք, կարսագ, հրեշակ, գաթայ և օղի։ Ներկայ եղողները մի մի բաժակ օղի էին խմում, մի քիչ բան ուտում։ Ապա մի խոնչի մէջ դրած բերում էին թագուորի և հարսի շորերը, քահանան օրնում էր, քաւորը խաչակնքում և վերցնում էր թագուորի գատկը՝ զնում նրա զիխին, յետոյ գօտին կապում և չուփան հաղցնում։ ապա իրենց անից բերած կարմիր և սրանց տանից վերցրած կանանչ կտորները խաշածն կապում էր կրծքին՝ Աստուած շնորհաւոր անի, բարի վայելում ասելով։ Այս կանանչ-կարմիր կառը կոչւում էր օրսակ և նշան էր թագուորութեան<sup>1)</sup>։

Այս միջոցին մակարրաշին վերցնում էր շորերի խոնչան, ուր մասցել էր միայն հարսնացուի շորերը՝ շապիկ, քող, զիխի շորեր և այն, մրգերի և ծաղիկների մէջ դրած ու մի մեծ, մետաքսէ թաշկինակով փաթաթած։ Ապա և Աստուած շնորհաւոր անէա ասելով զնում մի երիտասարդի զիխի, մոմեր էր բաժանում բոլոր ներկայ եղողներին, մի մի հաստ մամ էլ տալիս թագուորին ու քաւորին, յետոյ հարսնքատիրոջից թաշկինակներ առնում ու քաշ անում մակարների գօտիներից, որպէս նշան նրանց թիկնապահութեան։ Յետոյ պարզելով գաւագանի ծայրին կապած իւր թաշկինակ-դրօշակը, ուռամ էր կանչում և ուղերձում դէպի հարսնքատունը։ Նրան հետեւում էին թագուորն ու քաւորը մակարներով և թագուորաքոյցերով շրջապատուած։ Թագուորի ծնողները չէին զնում, այլ սպասում էին, որ հարսը գայ իրենց ուռը։

Թէպէս և լոյս է լինում, բայց և այնպէս՝ բոլորն էլ մոմերը վառած են զնում։

Երբ համնում են հարմնատուն, դռան առաջ կանգ են

<sup>1)</sup> Ներքին-Ագուլիսում օսկազը քահանան էր կապում եկեղեցում պատկի խորհուրդը կատարելուց յետոյ։

առնում, և հարսի շորերը կրող կինը պար է գալիս: Հարսնացուի մայրը և մօտիկ ազգականունիները գուրս են զավա, համբաւում թագուորին և մի կառք շաքար, կամ մի խնձոր կամ մի նուռն նուիրում էր նրան, որ վերցնում էր և զնում կողքին բռնած խոնչայի մէջ: Մի նուէր—մի թաշկինակ—ևս տալիս են շորերը պար ածող կնոջը և բոլորին ներս հրաւիրում Միքիչ յետոյ գալիս է հարսնացուի քահանան և նշանը օրնում: Սանամայրը վերցնում է հարմնացուի համար բերուած շորերն և տանում նրան հաղցնում: Յետոյ սկսելով զլովսը յարդարել, սանամայրը մկրատը զնում է բունքի մօտի ծամի վերայ և կամնում է կտրել՝ ասելով: Համչի քցի պրայիքչ: Թագուորը և սրա հետ եկողները միքանի փանարաթ էին նուիրում: Սանամայրը միքիչ կտրում էր ծամի ծայրից և սկսում զլովիր կապել: Գլխի շապաման կապելիս կրկին փող էր ուզում —զլիսի կապի պրայիք: Դարձեալ թագուորն ու նրա բարեկամներն էին նուէր տալիս: Ներքին Ազուլիսում հարսնացուի գոտին հարսնեղբայրն էր կապում, մի որևէ ընծայ տալով: Այս միջոցին հարմնացուի ծնողները մակարների գոտիներից և գուռնի վրայից մի մի թաշկինակ էին կապում: Հարմնացուին հաղցնելուց յետոյ սանամայրը առաջ էր բերում և կանդնեցնում թագուորի աջ կողքին, ինքն էլ կանգնում մօտը: Թագուորի ձափ կողմումն էլ քաւորն էր կանգնում, վառած մոմը ձեռին մի թաշկինակի հետ, որի միւս ծայրը թագուորն էր բռնում, զարձեալ մի վառած մօտի հետ նրբ մակարբաշին ուռայ կանչելով առաջ էր ընկնում, թագուորը բռնում էր հարսի ձեռը: և նրան հետեւմ: Բոլորը վառած մօմերը ձեռներին, նազարագուռնի առաջնորդութեամբ, երգելով, պարելով զնում էին եկեղեցի: Ներքին Ազուլիսում մի շուռի ճիւղն էլ էին տանում իրենց հետ եկեղեցի: Այս ուռի ճիւղն էլ վերև յիշուածի նման զարգարուած էր լինում վարագած թղթի կտորներով, բակլայի, սիսեռի, չամիչի, չոր ծաղիկների, ընկոյզի շարաններով: Ճիւղի վերին մասում մի նուռ էր

խփած լինում, իսկ ներքեռում, մի բաւաշ հաց, մէջը աղ ածած  
և ծալած, Երբ զնացքը համնում է եկեղեցուն, մօտիկները  
հսկում են, որ չարամիտ մարդիկ թել չգնեն եկեղեցու  
դռան և մի վրայ և թագուորի անցնելուց յետոյ հանգոյց  
ձգեն, որպէսզի թագուորը կապ ընկնի, Միհնոյն նպատա-  
կով թագուորն էլ մի կողակը էր կողպում ու պահում  
զրապանում, արիւնոտ զանակի հետ, որ միայն առազատի  
երեկոյին պիտի բաց անէր, Թահանան հարս ու թագուո-  
րին առանձնապէս խոստովանեցնելուց, և նրանց համաձայ-  
նութիւնը միմեանց հետ ամուսնանարու վերաբերութեամբ  
առնելուց յետոյ, կատարում էր պատկի խորհուրդը, Երբ  
ամոխները զլուխ զիսի էին դնում՝ թագուորը մի զարդ  
(մատանի) կամ զրամ էր տալիս հարսնացուին: Եւ Երբ  
երեսները պիտի գարձնէին դէպի սեղանը, սրանցից իւրա-  
քանչիւրն աշխատում էր առաջինը կոփսել միւսի ոտք,  
որպէսզի ապագայում ինքը գերիշխէ նրա վրայ: Պահի  
խորհուրդը կատարելուց յետոյ ծաղիկներով զարդարուած  
թագը դնում էին թագուորի զլուխին և տանում սեղանի մօտ  
կանգնեցնում: մի թաշկինակ էլ ձգում վզին, ու սրտ ծայ-  
րերը տարածելով կրծքին՝ Աւետարանը դնում էին վերան,  
նորահարսի ձեռն էլ Աստուածածնի պատկերն էին տալիս,  
իսկ քաւորին՝ խաչը: Ապա հրաւիրում էին բոլոր հարս-  
նելորներին, որ համբուրեն Աւետարանը և խաչամբոյը ձը-  
գեն յօգուտ քահանային:

Յետոյ արդէն նոյն կարգով, միայն այժմ աւելի մեծ  
աղմուկով և ուղիշ փողոցով վերագառնում են հարսի  
տունը: Ճանապարհին բարեկամների տան մօտից անցնելիս  
սրանք քաղցը խոնչա էին դուրս բերում — մի խոնչի մէջ  
զինի, օղի, հրեշակ, գաթայ, հաց, մեղր, ձուաձեղ և այն:  
Մակարբաշին այս խոնչից մի բաժակ զինի վերցնելով  
մօտեցնում էր թագուորի շրթունքին և բղաւում:

«Այ թագաւորի մակարներ»:

Սրանք միաբերան բղաւում էին.

—Հա բալի. (հրամայիր):

«Թագաւորի խումբ անուշ, անուշ, անուշ» հայրն  
—Անուշ, ձայնակցում էին մակարները:  
Թագուորը դիմին խմելուց յետոյ մակարբաշին կրո-  
կին ձայն էր տալիս, այս անզամ յիշատակերու խոնչա-  
քերովի անունը:  
«ԱՌ թագաւորի մակարները»:  
—Հա բացի:  
«Աստուած շէն պահի այսինչի անոնք (տունը), փու-  
խը (փոխարէնը) որա որդոցը ընէ:  
—Եէն կենայ, բղաւում էին մակարները:  
Երբ համառմ են հարսի տունը՝ հարսը զնում էր  
ներսի սենեակն, իսկ թագուորը զնում նստում էր յատուկ  
իրեն համար պատրաստուած թափափ վրայ, միքանի կո-  
պէկ տալով այն երեխային, որ նախապէս գրաւում էր  
այդ տեղը: Թաւորն էլ բարձրանում նստում էր կողքին:  
Մի քիչ յետոյ ծառայողներից մինը հացի սփռոցը ձեռին  
պար էր գայլու և ազատ սփռում գետնին: Անդիջապէս ծա-  
լապատիկ նստում էին և սկսում էին ճաշել: Սնվորաբար  
մատուցանում էին զնդում-խորոված, բողբաշ, փրաւ,  
պէանձար, խորոված և տոլմա—վեց տեսակ: Ընարում  
էին թամալաւ—սեղանապետ և նրա առաջարկնել խմում  
էին 1) քահանայի, 2) թագուորի, թագուհու և քաւորի,  
3) երկու կողմի խնամոնց, 4) հարսներների մի առ մի  
կամ միքանիսինը միտախին, վերջ՝ թամալու կենացը:  
Ճաշից յետոյ բոլորը խմբւում էին բակում, մինը  
գլխին էր զնում հարսնահօր կողմից թագուորին նուիրելու  
վերաբկուն և պարում, որից յետոյ հաղցնում էին թագ-  
ուորին: Այս ժամանակ սանամայրը առաջ էր բերում  
հարսին, որի ձեռքը բռնելով հայրը՝ տալիս էր թագուո-  
րին՝ ասելով: Բարով վայելիս: Հարս ու թագուոր խոնար-  
հում էին և համբուրում նրա ձեռքը: Խակոյն բոլոր հան-  
դիսականները մոմերը վառում էին և մակարբաշու առաջ-  
նորդութեամբ, նաղարա-զուանով ուղերուում դէպի թագ-  
ուորի տունը: Հարսի հետ գնում էր մի կին, որ կոչւում

էր և նենգահաւ, և հարսի եղբայրը կամ մօտիկ աղքականը, որ կոչւում էր հարսնախպէր։ Հարսի ծնողները չէին գընում, այլ յետելց նայելով մի կաւէ աման էին կոտրում, որպէսզի հարսն այլիս յետ չդառնայ, այսինքն չայրինայ ու հօրանց տուն վերադառնայ։

Տան ծառան կանգնում էր և այժմ էլ կանգնում է զռան առաջ և թոյլ չի տալիս հարսին տանելու, մինչև որ քաւորից մի ընծայ չի տառնում։

Հարսնեորները բարեկամ աներից քաղցր խոնչա ընզունելով զնում էին մինչեւ թագուորի տան դուռը, ուր կանգ էին առնում։ Թագուորի հայրն ու մայրը ընդառաջ էին դալիս, համբուրում նախ թագուորին և ապա հարսին ու քաւորին<sup>1)</sup> Յետոյ թագուորի մայրը միքանի լաւաշ հացեր ծալելով զնում է հարսի կռների տակ, որպէսզի քովվաթովվա ներս մտնի, զռան առաջն էլ մի գորգ էր սփռում, որ նրա վրայով անցնեն։ Ապա երր մտնում էին բակը, թագուորի հայրն ու մայրը սկսում էին միասին պարել թագուորի մայրը մի ափսէի մէջ ածած մրգեր՝ ծիրան, փշատ, ընկոյզ, կաղին և այլն, բերում էր և շաղ տալիս հարսի զլիխին։ Հարսնեորները և մանաւանդ երեխաները միմեանց հրճելով սկսում էին հաւաքել։ Ծնայում այս փոքր ինչ տարբեր կերպով էր կատարում։ այնտեղ թագուորի մայրը՝ ձեռին մրգերով լի խոնչան՝ պար էր դալիս սանամօր հանգէալ, որի մէջ զրուած էր լինում խաշած հաւի մի բուդ, մի գաթայ, մի աման հրեշտակ (հալուայ) և մի սրուակ վարդաջուր։ Պարի աւարտին՝ թագուորի մայրը միբողը ածում էր հարսի զլիխին, իսկ սանամայրը վարդաջուրը շաղ էր տալիս հասարակութեան վրայ, իսկ հաւի բուդը, գաթան և հալուան տալիս հարսին։ Սրանից յետոյ մօտիկ բարեկամները մէկ մէկ, կամ զոյգ զոյգ պարում էին, ձեռքին ունենալով միորնէ զարդ կամ կտոր, որը և

1) Թագուորի մայրը քաւորի ձեռն էր համբուրում, որը ան էլ փոքրահասակ լինէր ուս։

պարից յետոյ ձգում էին հարսի գլխին։ Խոկոյն մակար-  
բաշին բարձր ձայնով յայտաբարում էր, որ շէն կենաց  
այս ինչ բարեկամը, այս անսակ նուեկը տուեց հարսին։  
Ի վերջոյ թագուորի հայրը կամ մակարբաշին մի  
ընծայ՝ շորեղէն կամ զրամ՝ էր տալիս հարսնեղօքը, որ  
թոյլ տայ հարսին տուն մտնելու Եւ երբ բոլորը ներս են  
մտնում, հարսին տանում են կանանց բաժինը և խնդրում  
նստել թափափ վրայ, սակայն ուս չի նստում, մինչև որ  
սկեսուքից մի որևէ ընծայ չի ստանում։ Հոգատար սկե-  
սուրը անմիջապէս մի արու երեխայ է բերում և զնում  
հարսի զբրկը, որպէսզի սրա առջինելիք արու տղայ լինի։  
Հարսն էլ իւր հետ բերած մանր քիսաներից մինը տալիս  
է այս երեխային, իսկ միւսները յանձնում մինին, որ բա-  
ժանի տան երեխաներին։

Թագուորը քաւորի հետ բարձրանում էր իւր համար  
յատկապէս պատրաստուած թափսի վրայ, այս անգամ էլ  
մի նուեկը տալով այդ տեղը զբաւող երեխային։ Այս տեղ  
թագուորը բարև բանում (ձեռները կրծքին զնել) կանգը-  
նում էր, իրաւունք չունենալով նստել՝ մինչև որ սփոռը  
պար կածէին, կը սփռէին, տղամարդիկ կը նստէին ընթ-  
րելու և կը մատուցուէր տպանճարը կոչուած կերակուրը։  
Այս ժամանակ թագուորը նստում էր, ծանր ու մեծ,  
անխօս նրա համար յատուկ բաժին էին բերում նաղարով-  
զունով, բաղկացած ամենալաւ կերակրներից։ Մի քիչ  
յետոյ էլ հարսի հօրանց անից հարսի համար բաժին—կըն-  
ճըթաման—էին բերում, որը նաղարա-զունի տուաջոր-  
դութեամբ տանում մատուցանում էին հարսին։ Սովորու-  
թիւն էր, որ հարսն այդ առաջին օրը ոչ թէ սկեսրանց,  
այլ իւր հայրական հացով պիտի կերակրուէր։

Ընթրիքից յետոյ հարսնեղներն ցըւում էին, հարսը  
քնում էր ենգանի (նրան ուղեկցող կնոջ) մօտ, իսկ թա-  
գաւորն առանձին։ քաւորն էլ զնում էր իրենց տուն։

Պէտք է նկատել, որ երբեմն այս ընդհանուր կարգից  
շեղումներ էին պատահում։ այսպէս երբեմն թագուորն

ուղղակի եկեղեցի էր զնում և այստեղ սպասում, մինչև  
որ իւր մակարների մի մասը զնում և հարսին բերում էր:  
Եթէ հարսնացուի ծնողները չքաւոր էին լինում,  
որսակից յետոյ հարսնացուները եկեղեցուց այլևս հարսի  
տունը չէին զնում, այլ ուղղակի թագուորի տունը: Այս  
գէպքում հարսի հայրը մակարներին հիւրասիրում էր եկե-  
ղեցում քաղցրի խոնչով և մի մի հատ թաշկինակ նուիրում:  
Խնամականչ.—Հետեւեալ օրը, կիրակի, առաւօտեան  
թագուորի տան կտրին նադարա-գուռնան ածում էր սահա-  
րի կոչուած եղանակի: Իսկոյն մակարները հաւաքւում  
էին, ակսում էին պարել, գօտեմարտել, երգել: Ապա մա-  
կարրաշու առաջնորդութեամբ, առանց թագուորի, նադա-  
րա-գուռնի՝ առաջնորդութեամբ զնում են հարսի հօրն ու  
մօրը հրաւիրում և իրենց հետ բերում թագուորի տունը,  
ուր նրանց հիւրասիրում էին ճաշով: Այս հրաւէրքը կոչ-  
ում էր ինամականչ:

Ուրսու—Երեկոյեան մակարները դուրս էին զալիս  
բակը և այստեղ հերթով վերցնելով մի հաւ և քաւորի  
դաշոյնը կամ սուրբ՝ պար էին զալիս: Երբեմն այդ հաւը  
հարսի անից էր ուղարկուած լինում մի կուժ զինու հետ:  
Պարելիս մակարներն առամենով պոկում էին հաւի վե-  
տուքներից և գէպի վեր վշում: Ի վերջոյ պարելու հերթը  
համում էր թագուորին: սա էլ թուրը ձախ՝ խոկ հաւը  
աջ ձեռին ըռնած միքիչ պարելուց յետոյ հաւի վիզը խը-  
փում էր սրին և կտրում: Իսկոյն մակարները կեցցէ էին  
բդաւում և նրան գրկում, վեր բարձրացնում: Իսկ զուռ-  
նաշին շտապում էր հաւը վերցնել, որովհետեւ այդ նրան  
պիտի պատկանէր:

Սրանից յետոյ զալիս էր քահանան և թագուորի ու  
հարսի նարօտն արձակում խաչեղոր ներկայութեամբ, որ  
այդ ծիսակատարութեան միջոցին մի մերկացրած թուր  
էր ըռնած ունենում ձեռին:

Եթէ սրա հետեւեալ օրը պահք լինէր, այսինքն շորեք-

շարթի կամ ուրբաթ, նորուաը չեխն արձակի՝ մեղք համարելով, և յետաձգում էին հետեւալ օրուան:

Գիշերը ենդահը պատրաստում էր առադասար և հետեւալ առաւօտ սաւանը տանում ցոյց տալիս թագուորի և հարսի մայրերին ու ընծայ ստանում:

Թագուորը սոյն, առագաստի գիշերը մի ընծայ էր տալիս հարսին իրը ընթանաբացից, որ իւր հետ խօսի:

Մակարի խոնաց.—Հետեւալ առաւօտ նադարած-զուռնան նորից ճնշեցնում էր սահարի եղանակը թագուորի տան կտուրից: Մակարրաշին և մակարները մի մի ռքադցրի խոնչած առած դալիս էին թագուորի տուն: Այստեղ հաւաքւում էին նաև բարեկամ կանայք: Երբ բաւական բազմութիւն արգէն հաւաքուած էր լինում, քաղցրի խոնչաները մէկ մէկ ցոյց էին տալիս և յիշատակում թէ ովէ բերել: Յետոյ խմում էին այդ բերած օղիից և ուտում քաղցրեղէններից: Կէսօրին ճաշի էին նստում և ուտում շիսաշ:

Կանանց ճաշելուց յետոյ նորահարսը մի կնոջ առաջնորդութեամբ դալիս էր կանանց մօտ և հերթով համբուրում բոլորի ձեռքերը: Սրանք էլ մի մի ընծայ՝ մատանի, արծաթի գրամ, թելի վրայ շարուած բուստեր և այլն, ընծայ էին տալիս նրան: Այս ընծաները ևս կոչւում էին իրիստնստիկ: Այնուհետև շարունակում էին պարել, երգել, կատակիներ անել: Շատ անգամ մակարները միմեանցից գանգատուում էին թագաւորին՝ կատակով մեղագրելով միունէ յանցանգի մէջ: Թագաւորն էլ կարգադրում էր իրը տուզանք մի հաւ, մի կուժ գինի, կամ մի ուրիշ ուտելիք կամ խմելիք պահանջել մեղագրուածից: Խսկոյն միւս մակարները բանում էին մեղագրուածին, սեանից կապում, սաները շղթայում, մինչև որ զորանչը նշանակուած տուգանքը կըրերէր:

Այսպիսով վերջանում էր պակապրութեան հանդէսը: Երեք-չորս օրից յետոյ նորահարսը ջուր էր տաքացնում և լուանում սկեսրարի, սկեսրոջ, և տէգրների ոտները, սկսե-

լով միշտ աջ ոտից: Իւրաքանչիւրի ոտը լուանալուց յետոյ խոնարհուում էր և համբուրում, կամ ձեւցնում թէ համբուրում է: Մի քանի փանաբանդ ձգում էին տաշտի մէջ՝ իրր վարձատրութիւն:

Դըլիսըլլուայ.—Պատկից մի շարաթ յետոյ հարսի տանից մի կին վերցնելով մի որևէ է զարդ և սապօն, սանր ու սրբիչ, զալիս էր հարսի մօտ, զարդը նուիրում նըան, և զլուխը լուաննում, սանրում: Հարսի սկեսուրն էլ իւր կոդմից մի ընծայ էր տալիս այս կնոջը: Այս սովորութիւնն էլ այժմ վերացել է:

Մի քանի շարաթից, երբեմն նաև ամիսներից յետոյ մի կնոջ առաջնորդութեամբ բերեում էր հարսի օժիտը: Նոյն օրը հրաւիրում էին մօտիկ աղջականներ, որոնց մի առ մի ցոյց էր տրում այդ օժիտը:

### ՑԱՐԵՐՁ ԵՒ ԿՆՈՒՆՑ

Ամշովթիմ. — Գողթնում ևս ամրութիւնը մեծ վիշտ է պատճառում և աստուածային պատիժ է համարւում, ուստի և ոչ միայն բժիշկների, այլ և սրբերի օջնութեան են զիմում երեխայ ունենալու համար: Շատերը ուխտ են գնում թատա, այժմ թըքարնակ, զիւղի Քեշիշ (քահանայի) գերեզմանին, նրա հողից ածում իրենց վրայ, ուրիշներ նոյն խակ ուարորիկ զնում են Ս. Ստեփանոս, Ս. Կարապետ և այլ ուխտատեղիներ, ուր երեխայ ունենալու վառ ցանկութիւնը աղօթքով յայտնելուց յետ՝ մասունքի վրայից մի մատանի են գողանում, խոստանալով, որ եթէ սուրբը կատարէ իրենց խնդիրը և երեխայ տայ՝ ոչ միայն այդ մատանին յետ կըրերեն, այլ և մի խաչ կընծայեն: Եւ յիրաւի, երբ երեխայ են ունենում, գոնէ գուռ են ընկնում, մուրում և ստացած գրամով մի արծաթէ շղթայ և մի փոքրիկ խաչ շինել տալիս, կախում երեխայի վզից: Երբ վերջինս 3—4 տարեկան է դառնում, այդ շղթան ու խաչը հալել և մի մեծ խաչ են շինել տալիս, ու պողա-